ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2013 թվականի N 140 - Ա

<<ԻՋԵՎԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածով, հիմք ընդունելով <<Իջևանի առողղության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2013թ. հոկտեմբերի 29-ի թիվ 21 գրությունը

որոշում եմ.

1. Տալ համաձայնություն <<Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող չօգտագործվող հողատարածքից վարձակալությամբ /կառուցապատման իրավունքով/ անհատ ձեռնարկատեր Ա. Սարուխանյանին դեղատնային գործունեություն իրականացնելու նպատակով 66.0 քմ մակերեսով հողատարածք հատկացնելու համար:
2. Առաջարկել <<Իջևանի առողղության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին օրենքով սահմանված կարգով կնքել վարձակալության /կառուցապատման իրավունքով/ պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

15 նոյեմբեր 2013թ.
ք. Իջևան